

6798

902 7

L-14

6 1926

39(91/54)

L-14

ՅԵ. ԼԱԼԱՅԱՆ

189

h.u

202.7

L-14

h.2

ՆԻԺԻ ՅԵՎ ՎԱՐԴԱՇԵՆԻ ՈՒՏԻՆԵՐԸ

ԱԶԳԱԳՐԱԿԱՆ ՏԵՍԱԿԵՏԻՑ

ԱՐՏԱՏՊԱԾ Ն. Խ. Ս. Շ. ԳԻՏՈՒԹՅԱՆ ՅԵՎ ԱՐՎԵՍՏԻ ԻՆՏԻՏՈՒՏԻ ՏԵՂԵԿԱԳՐԻ № 1-ԻՑ

20.12

8059

u.r

ՆԻՃԻ ՅԵՎ ՎԱՐԴԱՇԵՆԻ ՌԻՏԻՆԵՐԸ ԱԶԳԱԳՐԱԿԱՆ ՏԵՍԱԿԵՏԻՑ

ՏՊԱՐԱՆ ՀԵՐՄԵՍ
ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅԱՆ.
ՄԱՐՔՍԻ ՓՈՂ. № 29
ԳՐԱՌԵՄ. 699Բ.
ՏԻՐԱԺ 50

Յ Ե Ր Կ Ի Ր Ը.— Այն ժողովուրդը, վոր զեռ պահպանել և ուստիական լե-
զուն և իրեն ուստի անվանում, այժմ գտնվում և միայն Ադրբեջանի հանրա-
պետության նուխու գավառի Վարդաշեն և Նիժ գյուղերում, վորոնք միմյան-
ցից հեռու յեն 37 վերստ:

Կ Լ Ի Մ Ա Ն.— Ողերևույթ արանական կայարան չլինելու պատճառով վորոշ
վոչինչ չի կարելի տակ. միայն գտնվելով Կովկասյան զխավոր լեռնաշղթայի
ստորոտում, ծովի մակերևույթից մոտավորապես 2500 ֆ. բարձրության վրա,
կարելի չե ասել, վոր կլիման մեզմ և և չափազանց ջրառատ, զարնան ու աշ-
նանը տեղում են հորդ և հարատե անձրևներ, իսկ ձմեռը գալիս և մեծ քա-
նակությամբ ձյուն: Ամառը բավական տաք և լինում և խոնավ, մանավանդ
Նիժում:

Բ Ո Ւ Ս Ա Կ Ա Ն Ո Ւ Թ յ Ո Ւ Ն Ը.— Թե վարդաշենի և թե մանավանդ, Նի-
ժի բուսականությունը շատ հարուստ և առատությամբ բուսում են կաղնի,
շագանակի, ընկուզի և չինարի ծառեր: Այգիներում լինում են խնձորենի,
տանձենի, կեռասենի և սալորենի, կաղնի, ծիրանի, ալոջա, թթենի, սերկի-
լի, զկեռի, հունի, հաղարձի, մոշի և խաղողի վորթեր: Անտառներում բուս-
ում են փշատերև և սաղարթավոր ծառեր, վորոնց մեջ ամենից ավելի լի-
նում են հաճարի, կաղնի և լորի, ապա տղի, հացի, ուռենի, պատահում և
նաև ընկուզենիներ:

Կ Ե Ն Գ Ա Ն Ի Ն Ի Ր.— Անտառներում կան նապաստակ, սկյուռ, յեղջերու,
այծեր, գայլ, արջ, վարադ, վայրի վոչխար, քարայծ, վայրի գոմեշ, շնագայլ
սամույր և կզաքիս:

Թ Ո Ւ Ն Ն Ե Ր Ի Գ Ն շանավոր են ուրուր, բաղե, բու, յեղջերավոր
բու, կոռնկ, արծիվ, արագիլ, փասյան, աղափխներ, սոխակներ, առանձնա-
պես Նիժում բազմաթիվ են սոխակները:

Ն Ի Ժ.— Նիժը գտնվում և 65°—15' և 41°00' միջոցականների տակ, գա-
վառի կենտրոն նուխի քաղաքից 64 վերստ դեպի արևելք, և վարդաշենից 25
վերստ դեպի արևելահարավ, Կովկասյան լեռնաշղթայի Շահ-տաղ և Բուղդա-
տաղ գագաթների միջև ընկած ցած դաշտավայրի վրա: Նրա հեռավորությունը
նույն նահանգի կենտրոն Գանձակից 139 վերստ և: Գյուղն ամբողջապես պա-
տած և անտառներով, վոր տեղ-տեղ ընդհատվում և բլրնձի և ցորենի արտե-
րով:

Գյուղի արևելյան կողմից հոսում և Զորվա, իսկ արևմտյան՝ Թյուր-
զյան գետերը, վոր զարնան սկզբին սաստիկ վարարում են, հաճախ փոխում
էրենց ընդարձակ հունը և շատ վնասներ պատճառում: Շրջակա լեռներն ու ամ-
բողջ դաշտավայրն անտառով ու այգիներով պատած և, դաշտավայրն և փոս

11.
1898
35-674 9

2004

ընկած, կլիման սառնակի անձրևային, ուստի և գյուղը շատ սառած և ջրերով, ամեն մի տան մեջ մի կամ մի քանի աղբյուր կա, 1—2 արշին խորությամբ փորելիս ջուր և դուրս գալիս, ամառն էլ սառնակ չոգ է, և այս պատճառով շատ հարուստ և վարժամ բուսականությամբ:

Գյուղը համազանց բնդարձակ տարածություն և զբաղում, վորովհետև յուրաքանչյուր տան առաջ տարածվում և բնդարձակ այգի և նույնիսկ արտաՄիայն անատեղին բնուում և 126 գեոյատին, այգիները 884,3 գեոյատին և հատկապես խաղողի այգիները 26,7 գեոյատին:

Հնումը այս միևնույն տարածության վրա գտնվում էին Նիժ և Մալիբու գյուղերը, սակայն այժմ վերջինս, վոր գտնվում է հյուսիս-արևելյան ծայրում, միացել և և վերածվել թաղի: Գյուղի գրեթե մեջ տեղով անցնում է Նուխուց Աղտաշ և այստեղից Լյակի յերկաթուղային կայարանը ձգվող խճուղին: Նիժից մինչև Լյակի կայարանը 55 վերստ է: Նիժը հնումը բաժանված է յեղել 3 թաղերի, չհաշված Մալիբու, վոր առանձին գյուղ և համարվել: Սրբանք յեղել են Մալիբու՝ հյուսիս արևմտյան կողմում, Դարաբաղ՝ հարավ-արևմտյան, Պիծելու՝ հարավ-արևելյան: Այժմ այս թաղական անունները դարձյալ պահպանված են. միայն ստորաբաժանվել են 12 թաղի: Այսպես՝ Մալիբու բաժանվել է 3 թաղի. 1-ին՝ Մալիբու, 2-րդ՝ Ֆալիբու, 3-րդ՝ Դալիբու: Դարաբաղ՝ 2 թաղի. 1-ին Դարաբաղ, 2-րդ Դարամահլա: Պիծելուն բաժանվել է 3 թաղի. 1-ին Պիծելու, 2-րդ Դոճա-բեկու և 3-րդ Զիր-մահլա: Յերեք նախնական թաղերում էլ կան մի-մի թրօական թաղ՝ Եալա-ղաշու, Աբղալու և Քարբուլու. Տասերկուերորդ թաղը Մալիբու հին գյուղն է:

Դարամահլում գտնվում է Յեղիշի յեկեղեցին. վոր շինել և Ասավաճառուր քահանա ճոտանյանը յուր միջոցներով, վորի գավթում և ինքը հանգչում է: Յեկեղեցու մեջ գտնվում է Յեղիշե առաքյալի աշակերտ Վլասի գերեզմանը: Զատիկի հինգշաբթի օրը վոչ միայն նիժեցիները, այլև վարդաշենցիներն ու շրջակա գյուղացիներն ուխտ են գալիս այս յեկեղեցին: Յեկեղեցու տեղում հնումը մի փոքրիկ ուխտատեղի և յեղել Վլասի գերեզմանի վրա: Յերբ մատուռը քանդել են, դատել են յերեք արծաթի խաչ, վոր ամփոփել են յեկեղեցու սեղանի առաջ. ավանդաբար պատմում են, թե այդ խաչերը սՄեսրոպն և զրել նահատակի մարմինը ամփոփելիս:

Մալիբու թաղում գտնվում է Ասավաճառնի յեկեղեցին, վոր շինել է ժողովուրդը, վերջին քառասուն տարիների ընթացքում: Դարաբաղ թաղում կա Ասավաճառնի յեկեղեցին, վոր շինել և Պետրոս նահատակի վորդի Դալուստ յուրաքանչյուր յուր անձնական միջոցներով: Սրա գավթումն էլ գտնվում է նրա գերեզմանը: Վարդապետն մեծ բազմություն ուխտ և գալիս այդ յեկեղեցին, այստեղ գտնված ձեռագիր Ավետարանը համբուրելու:

Պիծելու թաղում գտնվում է Լուսավորչի յեկեղեցին, վոր նոր և շինվել: Գյուղի հյուսիսային ծայրում գտնվում է չուկան, վորի հողի մի մասը պատկանում էր Բումի թուրք բեկերին: Այստեղ կան 4—5 աղյուսաշեն խանութ և բազմաթիվ փայտածածկ տեղեր, ուր ամեն յերեքշաբթի բերում են թե Նիժից և թե շրջականներից ամենայն տեսակ սղորանքներ վաճառելու: Բնակիչների թիվը 1914 թ. համարում էր 9884 հոգու:

Վ ա ռ զ ա շ ի ն.—Վարդաշեն գյուղը ընկնում է 37°, 65' և 41°, 15' մի-

ջուրականների տակ, Նուխուց գետի արեկը 37 վերստ հեռու, նույն նահանգի կենտրոն Գանձակից 117 վերստ. ամենամոտ յերկաթուղային կայարանը Յեկլաին է, 50 վերստ հեռու: Գյուղը յերեք կողմից շրջապատված է կովկասյան լեռնաշղթայով, և միայն հարավից բաց է, այս պատճառով և ազատ և քամիներից և սողաջարար կլիմա ունի:

Գյուղի արևելյան կողմից հոսում է Վարդաշենի գետը. վոր ուտիերեն կոչվում է Քալա-ուք (Մեծ գետ): Նա սկիզբն և առնում կովկասյան լեռների լանջերից և գյուղի Ղշլախ կոչված թաղի մոտ միանում խալխալ գետակին (խալխալուն-ուք) և վերակոչվում է Էլջիկյան, ու գնում թափվում Կուրի մեջ Յեկլախից փոքր լնջ վերև:

Գյուղի արևմտյան կողմից էլ հոսում է Դուլուտի-բյանտ կոչված գետակը, վոր մի ջրանցքով սկիզբն և առնում Վարդաշեն գետից գյուղի հյուսիսային ծայրում: Այս ջրանցքը ավանդության տեսիով, շինել և Դավութը՝ ցանկանալով տանել հարևան Զաղեթ գյուղը, սրա հողերը փոռողիս: Սակայն վարդաշենցիներին համաձայնությունը խնդրելիս միայն մի յղի կին չի համաձայնել, ասելով՝ «Գուցե ապագային արդանդիս յերեքան չի ցանկանալու, վոր յուր գյուղի ջուրը ուրիշ տեղ տարվի, յես ինչպես կարող եմ նրա կողմից յերաշխալորիլ»: Ուստի և ջրանցքը կխառտ և մնացել ու ջուրը յեկել թափվել և մերձակա Տաշաջիլ գետակի մեջ ու նրա հետ միասին խառնվել Էլճիկյան գետին: Վարդաշենը շատ սառած և աղբյուրներով, միմիայն Սեկիկյան տունը յոթը աղբյուր և հանել:

Վարդաշենը բաժանվում է յերեք մեծ թաղերի՝ Վարդաշեն, Ղշլաղ և Զհուտլյար: Վարդաշենը տարածվում է կովկասյան լեռնաշղթայի լանջին: Գյուղի ստորոտից յերեք լաշն փողոցներ բարձրանում են մինչև գյուղի կենտրոնը, ուր մի փոքրիկ հարթություն վրա գտնվում է չուկան, իսկ այստեղից միայն մի փողոց ձգվում է մինչև գյուղի գլուխը: Փողոցների յերեք կողմում գտնվում են այգիներ և սրանց մեջ մի-մի տուն՝ յուր բոլոր պարագաներով: Այս թաղում գտնվում են լուսավորչական և որթոտոքս մի-մի յեկեղեցի: Լուսավորչական յեկեղեցու բնդարձակ գավթում շինված է Մահակյան յեկեղեցական ծխական յերկես և յերկասյան զպրոցի հոյակապ շենքը, վորը կառուցել և Սուխան Սիլիկյանը: Շուկայից ներքև գտնվում է պետական յերկասյան և միգասյան որիորդաց զպրոցները: Այս թաղում ուշագրավ է ահագին կահին, վոր սուրբ և համարվում: Ղշլաղ թաղն ընկած է Վարդաշենից գետի հարավ, մոտ յերեք վերստ հեռու, գաշտավայրի վրա: Այստեղի կլիման բավական տաք և գյուղն ավելի նահապետական տեսք ունի, հին ձևի տներ, նույնպես այգիներով շրջապատված, այստեղ անհամեմատ ավելի կան:

Այս թաղը չունի վոչ առանձին յեկեղեցի և վոչ առանձին զպրոց, կա միայն որթոտոքս աղթարան մի սենյակի մեջ: Այս թաղում բնակվում են նաև թուրքեր, վորոնք ունեն մի մզկիթ և սրա գավթում՝ մի զպրոց:

Վարդաշենի բնակիչները 1914 թ. յեղել են 2941 հողի: Զհուտլյար թաղը կից է Վարդաշենին, և գտնվում է նրա արևմտ-հարավային անկյունում: Սրա կազմությունը բոլորովին տարբերվում է վերոհիշյալ յերեք թաղերից, այստեղ տները չեն շինված այգիների մեջ, այլ բարձրանում են նեղ,

ձուռնմունք փողոցների յերկու կողմում, միմյանց կպած, վորովհետև հրեաներին թույլ է տրված միմիայն տնատեղ գնել և վոչ այդի կամ վարելահող: Այս թաղում բնակվում են հրեաներ, թեպետ կան նաև մի քանի տուն ուտիններ, վորոնց տները հրեաների տների պես չեն, այլ շրջապատված են այգիով: Այս թաղում կա յերկու բավական գեղեցիկ սինոգոգ, և մի որրորդաց պետական դպրոց:

1911 թվից այս մասը դադարեց վարդաշենի թաղ համարվելուց և կազմեց մի առանձին գյուղ Ջհուռլյար անունով և միացավ Ճալիթի հասարակության, վորովհետև վերջինս 50 ուրբիով ավելի պակաս տուրք պահանջեց սրանցից, թույլ տալու, վոր սրանց տավարն արածե իրենց, Ճալիթի, արոտատեղիներում:

Ավանդաբար պատմում են, թե այս հրեաները յեկել են Պարսկաստանից Շահաբա-մեծից հալածվելով, բնակություն հաստատել Բուջազ գյուղի մոտ, այնտեղից վերահաստատվել այստեղ: Սրանց ընտանեկան լեզուն ֆարսերեն է, վաղուց մոռացել են մայրենի լեզուն: Սրանք 1914 թվին ընդամենը 260 տուն էլին 901 ար. 759 իգական, ընդամենը 1660 հոգի: Պարսկերեն էլին աստորով և թուրքերի մշակությամբ ուտինների հողերի վրա կիսովի: Հետաքրքրական է, վոր Ջհուռլյարի թաղերը միմյանցից բաժանված են յերկաթե թելերով և այս այն նպատակով, վոր շարաթ որբերը հրեաները կարողանան իրենց թաղի մեջ վորևե անհրաժեշտ աշխատանք կատարել, որինակ՝ աղբյուրից ջուր բերել, վայտ կամ խոտ տանել, մինչդեռ թաղից դուրս յեկնելիս այդպիսի աշխատանք ել չի թույլատրվում:

ՈՒՏԻՆԵՐԻ ԾԱԳՈՒՄԸ

Նիժի և Վարդաշենի բնակիչներն իրենք իրենց կոչում են ուտի կամ քշտոն, իսկ ոտարների հետ խոսելիս՝ հայ կամ երմանի: Քշտոն թեև նշանակում է քրիստոնյա, սակայն անխոր բոլոր քրիստոնյա ազգերի վերաբերմամբ չեն գործածում, այլ միայն իրենց, լուսավորչական ուտինների և հայերի: Որթոտքս ուտինները իրենց ուտի գյուրջի (վրացի ուտի) են անվանում:

Նիժեցիները, ինչպես և վարդաշենցիները, իրենց Նեոյուշի կամ Նեոյշի են կոչում: Այս կոչումը ծագել է վոչ թե Նիժ քառից, վորովհետև հենց այժմ էլ յերբ ուզում են նիժեցի ասել, թուրքական լու մասնիկով են անվանում և ասում Նիժլու, այլ ստրուկ, գերի, բառից: Հավանական է, վոր սրանք այս կոչմանը գերի են բերված և այդպես էլ կոչվել են:

Նիժեցիներն ու վարդաշենցիները միմյանց խալիկ (մորեղբայր) են կոչում և կամ խաչփայ (կնքահայր): Նիժեցիները հայերին բացի քշտոնից, կոչում են նաև արմի, իսկ վարդաշենցիք արմեին: Ուղղակի դիմելիս ապեր են կանչում (յեղբայր): Թուրքերին նիժեցիները թաջիկ են ասում, իսկ վարդաշենցիները թաթար, ուղղակի դիմելիս քիրվա (քավոր):

Ուտինների ծագման մասին յեղել են հետևյալ յենթադրությունները. — Նախ Մովսես Խորենացին և ապա սրանից ստնելով ուտիացի պատմագիր Մովսես Կաղանկատուացին ասում են, վոր ուտինները ծագել են այն Առանի սերունդներից, վորին Վաղարշակ Ա, հայոց թագավորը Հայաստանի արևելա-

հյուսիսային կողմը կուսակալ և կարգի և վորի Ադու (քաղցր) մականունից առաջացել և Ազվանք անունը*: Այս ավանդությունը մասնանշում է, վոր ուտիններն էլ Ազվանից բազմաթիվ ցեղերից մինը կարող են լինել, վորոնց թիվը Ստրաբոնը հասցնում է մինչև 26-ի:

Բարոն Ուսլարը յենթադրում է, վոր ըստ Հեբեզոտի Դարեհ Վշտասպի պետության 14-րդ սատրապության մեջ թափառաշրջիկ ժողովուրդների շարքում յեղած ուտինները Հայաստանի Ուտի նահանգի բնակիչները պետք է լինեն, և վոր աժմյան Նուխու դավառում ապրող ուտիններն այդ ցեղի ներկայացուցիչներն են: (Барон К. Устлар, Древнейшие сказания о Кавказе. стр. 53, Тифлис 1881).

Պրոֆ. Էյխվալդ յուր 1825 թվին կովկասում կատարած ճանապարհորդության միջոցում հիմնվելով ֆիննական ցեղի վոտյակների, վորոնք նույնպես իրենց ուտ կամ վոդ են կոչում, ուտինների անվան հետ ունեցած նմանության վրա՝ յենթադրում է, թե այս յերկու ժողովուրդները կարող են ազգակից լինել: (Э. Эйхвальд. Страбоновы известия о Кавказе и Южной России. Библиотека для чтения XXX 1838 г.):

Էյխվալդի այս յենթադրությունն առանձին հետաքրքրություն առաջացրեց և ակադեմիկ Շիֆներ ուսումնասիրեց ուտինների լեզուն և նույնիսկ լիզամեց փերականություն և հանգավ այն յեղրակացություն, վոր ուտինների լեզուն մոտիկ ազգակից է լեռնային Դաղստանի գանազան լեզուների հետ, միայն ժամանակի ընթացքում յենթարկվել է թրքական ազդեցության: ** Արգվիսով և միանգամայն հերքվում է Պրոֆ. Էյխվալդի յենթադրությունը, թե ուտինները ազգակից են ֆիններին: Այս յենթադրությունն ավելի հանգամանորեն հերքեց բժշիկ Հ. Հարությունյան, համեմատելով ուտինների գանգերը ֆիննական գանգերի հետ: Սակայն և այնպես՝ Հարությունյանն էլ չկարողացավ վճռել ուտինների ծագման խնդիրը, նա ասում է, թե ուտինները, սրանց մասին ունեցած տվյալների համաձայն, կովկասի ժողովուրդներից առանձին են կանգնած, միանգամայն նմանություն չունենալով վոտյակների և մարավանների հետ: (А. А. Арутюнов. Удины, 1905, Москва, стр. 153):

Գալուստ Տիւր Մկրտչյան (Միարան) 1893 թվին այն կարծիքը հայտնեց, թե ուտիներն ու կարելի չի ուրարտական բևեռագիր արձանագրությունները վերծանել, հետևապես և ուտիններն ուրարտական կամ խալտական ժողովրդի մնացորդ են: (Արարատ 1893. յեր 923):

Երկերտի կարծիքով ուտինները Դաղստանի կյուրինյան կամ հարավարևելյան լեզվական խմբի ժողովուրդներից մինն է***: Միևնույն կարծիքին և նաև Ա. Դիրը, վոր կազմել է ուտիներն լեզվի փերականությունը****:

Մեզ համար ամենից ընդունելին Երկերտի կարծիքն է:

* Մովսես Խորենացի Բ. Գիրք. Գլ. Ը. Կաղանկատուացի Գլ. Դ.:

** Versuch über die Sprache der Uden. В. Мемурах С. П. Б. Импер. Академии Наук. VII серия т. VI. № 8. 1863 г.):

*** Die Sprachen des Kavkasischen Stammes. Wien. 1895.

**** Грамматика Удинского языка. Сборник материалов для описания Кавказск. племен и местностей, в. XXXIII.

ՄԱՐԴԱԲԱՆԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ուտիններին մարդաբանական տեսակետից ուսումնասիրել է թժ. Հ. Հարությունյանը, կատարելով չափումներ 80 նիժեցիների և 70 վարդաշենցիների վրա: Յուր այս աշխատության մեջ թժ. Հարությունյանը բնորոշում է ուտիններին հետևյալ կերպ*.

Ուտին սևուրջակ է, միջահասակ, և ավելի հակված դեպի կարճահասակությունը, խիստ բրախիցեֆալ և (կարճագլուխ), միջադեմ (մեզոպրոզոփում) սակայն հայտնի հակումն ունեցող դեպի լայն դեմքը (համեպրոզոպիա), նեղ բթանի (լեպտոփրին), փոքր ինչ կարճ, բայց լայն իրանով և բավականաչափ յերկար անդամներով: Յուրայինների հետ միաբանությունը կազմում է ուտու բնավորության եական կողմը, բայց դեռ ևս բոլորովին դուրս չեկած լինելով սերնդական կազմակերպությունից, վոխակալությունը, արյան վրեժնազրույթությունը տևում է սերնդից սերունդ: Ուտին այս կողմերի բոլոր ազդերից, հայից, թուրքից, և նույնիսկ լեզգիներից, ավելի սրտոտ է և քաջ, այս պատճառով և վոչ թե ինքը, այլ մի բուռն ժողովուրդն է ճնշված շրջապատող բազմաթիվ թուրքերից, այլ ինքն է յերկու ազգում բոլորի վրա:

Ուտին կրոնամով է և սնապաշտ. կրոնի ձևական մասերը, ինչպես պատրանի, յեկեղեցի, ուխտ գնալ, մատաղ կտրել, կազմում են նրա համար կրոնի հական մասը: 1386 թվի վիճակագրության համաձայն, բոլոր տղամարդ ուտիններից միմիայն 28 հոգի ուսեբեն և 60 հոգի հայերեն գրել կարող են իմացել: Թե վարդաշենցիներն և թե նիժեցիները բացի ուտիններից, միայն 0,8 իմացել են ուսեբեն կարգալ և խոսել, սակայն այս վերջին տարիներս բավական առաջադիմել են, այժմ Վարդաշենի նոր սերունդը գրեթե ամբողջովին և նիժեցի մեծ մասամբ գիտե հայերեն խոսել:

ԼԵՋՈՒՆ ՅԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Ուտինների լեզուն ըստ էրկերդի և Ա. Դիրրի պատկանում է Դաղստանի իյուրինյան կամ հարավ-արևելյան լեզվախմբին և մեծապես յենթարկվել է թրքաց, հայոց և պարսից լեզուների ազդեցությանը: Ուտինների մեջ կոկորդային հնչյուններ չափազանց շատ կան:

Աժմյան ուտինները հաճախ գործ են ածում հայերեն նշանագրերը, վորոնք, սակայն, լիովին չեն կարողանում արտահայտել նրանց բոլոր հնչյունները: 1893 թվին, վարդաշենցի Սիմեոն Բեժանով քահանան հարմարեցնելով ուսական նշանագրերը, ուտիններն թարգմանեց նոր կտակարանը, վոր տպագրվեց 1902 թվին: (Сборник Материалов для описания Кавказских племен и местностей. в. XXX, Тифлис 1902).

Ուտիական բանաստեղծությունը թեպետ ազգված է թուրքաց և հայոց բանաստեղծությունից, սակայն ունի յուր առանձնահատկությունները. միանգամայն արժանի չե գրի առնելու: Հատ ու կտոր յերգեր և հեքյաթներ ցրված են հայ և ուս պարբերական հրատարակությունների մեջ, բայց ամ-

* А. Арутюнов. Удины, Изд. Антропологического Отдела Им. Общества Любителей Естествознания, Антропологии и Этнографии. Москва. 1905.

բողջական մի գործ դեռ ևս չկա: Ասում են, թե 17 դարու սկզբում յեղել և Յովհաննես անունով մի շատ նշանավոր ուտի աշուղ, վորը յերգեր է հորինել: Այժմ ժողովրդյան բերանում պահպանել են աշղի Կոստան Գլա-Մարխոյի և աշղի Գեվի յերգերը, վորոնցից մի քանիսն ինձ հաջողվեց գրի առնել:

Ուտիներն լեզուն չափազանց ազգատ և և բուն ուտիներն բառերը չափազանց սակավաթիվ. վերացական դադափարների համար մեծ մասամբ բառեր պակասում են և կամ կազմվում թրքական լուղ մասնիկով:

Նույնիսկ դասական թվականներ չունին, և կազմում են թրքական մճի մասնիկով, ավելացնելով ու ձայնավորը քաղցրահնչությամբ համար. այսպես սա նշանակում է մեկ, սա ու մճի առաջին, պես, յերկու, պես ու մճի յերկրորդ և այլն:

Քանակական թվական անունները համարում են մինչև քսանի, այսինքն ուտին իր ինքնուրույն դարգացման բնթացքում կարողացել է համարել յուր ձեռների և վոտների բոլոր մատերը և դրանով էլ շատացել է, այնուհետև յենթարկվելով թուրքերի ազդեցության՝ սկսել և գործ ածել թուրքական բառեր՝ քսանից բարձր տասնյակները արտահայտելու, սակայն նիժեցիները ըսկսել են քսան և տասը բառերը բարդելով կազմել մյուս տասնյակները, այսպես՝ յերեսուն կազմվել է մի քսան տասը բառերից (սազովիժ), քառասունը՝ յերկու քսան (պադո), հիսունը՝ յերկու քսան տասը (պադովիժ), վաթսուներ յերեք քսան (խիրդո), յոթանասունը՝ յերեք քսան տասը (խիրդովիժ), ութսունը՝ չորս քսան (րիրդո), ինսունը՝ չորս քսան տասը (րիպովիժ): Հարյուրի համար ունեն առանձին բառ՝ բաժ, իսկ հազարի համար չունին, գործ են ածում հայերեն հազար բառը: Առանձնապես ուտինների լեզուն զբաղվել է մի քանի լեզվաբանների ուշադրությունը և այս մասին լույս են տեսել հետևյալ աշխատությունները, վորոնք, սակայն, ունին բավականաչափ թերություններ, վորովհետև կազմված են ուտիներն վոչ կատարյալ իմացող լեզվաբաններից:

Առաջինը, կապրոզից հետո, վոր սակայն տվել է ուտիներն միմիայն մի քանի բառեր և նախադասություններ՝ Կարապետ Շահրամանյան Ավթանդիլյանն է, Դաշուրլաղից, վոր Սանահնի առաջնորդ Ասովածատուր Հարությունյանի խնդրով գրել է ուտիացոց քերականությունը 1842 թվին. սրա մի որինակը գտնվում է Լենինգրադում, իսկ մյուսը, վոր 1859 թվին Փարիզում Բաննըլիից արտագրել է Գևորգ Պրուսացու հրամանով 1848 թվին Թիֆլիսում արտագրված որինակից, պահվում է Փարիզի Ազգային մատենադարանում (№ 65): Սակայն առաջին լուրջ ուսումնասիրությունը պատկանում է Շիֆներին, վոր տպագրել է Լենինգրադի Գիտությունների Ճեմարանի Мемуарների 7-րդ սերիայի 6-րդ հատորի № 8-ում գերմաներեն լեզվով Versuch über die Sprache der Uden վերնագրով 1863 թվին: Նրանից հետո 1895 թվին լույս է տեսել Բ. Փոն Էրկերտի Die Sprachen der Kaukasischen Stammes (Wien), աշխատությունը, ուր առաջ է բերված 545 բառ և մոտ 200 նախադասություն, վորին նա կցել է և քերականական մի շատ համառոտ ակնարկ: Այս աշխատությունը, Դիրրի ասելով, թեև ժամանակին մեծ աղմուկ է հանել, սակայն լի է բազմաթիվ սխալներով: Համեմատաբար ավելի լիակատար է Ա. Դիրրի կազմած քերականությունը, վոր լույս է տեսել 1904

թվին թիֆլիսում Сборник Материалов для описания местностей и племен Кавказа ժողովածվի 33 դրբում:

Սակայն սա ել վերաբերում է միայն Վարդաշենի բարբառին: Պ. Դիրբը խոստացել է հետո զբաղվել և Նիժի բարբառով, վոր մինչև այժմ չի կատարել: Տպագրված ուրիշ աշխատություններ չկան:

ՈՒՏԻՆԵՐԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆԸ

Դատելով հասարակական հին կազմակերպության մնացորդներով, կարելի չէ ասել, վոր ուտիները ևս նախնական շրջանում ունեցել են մայրիշխանական կազմակերպություն, վորից անցել են հայրիշխանական սերունդական կազմակերպության, վոր հետո ստորաբաժանվել է նահապետական գերդաստանի և այժմ բաժանվում է ընտանեկան կազմության:

Քննենք յուրաքանչյուր աստիճանը մի առ մի:

Ա. Մայրիշխանություն.—Ուտիներն իրենց նախնական դարգացման շրջանում ունեցել են մայրիշխանական կազմակերպություն, վորի հատկանիշ մնացորդները կարելի չէ գտնել այժմյան սովորությունների մեջ:

1) Հայտնի է, վոր մայրիշխանություն միջոցին յերեխայի անունը դրնում էր մայրը և վոչ հայրը, ընտրելով յուր, հաճախ սերնդի, տոհմի, և կամ այս սերունդը հովանավորող վորդինների անուններից, այսպես և այժմ. ուտինների մեջ յերեխայի անվանակոչություն, այն և մկրտության, միջոցին թույլ չի տրվում յերեխայի հորը ներկա գտնվելու, մինչդեռ մոր յեղբորը անպատճառ հրավիրում են ներկա գտնվելու, անունն էլ ընտրում և մայրը և կամ սրա յեղբայրը, քույրը, հաճախ յուր գերդաստանի անուններից: Մոր յեղբայրը պարտավոր է յերեխայի առաջին շորերը, շապիկ, շալվար, արխալուղ և գլխարկ, ուղարկել ընծա:

2) Մայրիշխանություն միջոցին մորեղբայրը հանդիսանում է ընտանեկան տեր: Նրան է պատկանում յուր քեռվորդինների կյանքի և մահու իրավունքը: Նա իրավունք ունի նրանց ծախելու կամ գրավ գնելու: Պարտավոր է ամուսնացնել յուր քրոջ աղջիկներին և վորպես գերդաստանի ներկայացուցիչ՝ իրավունք ունի քրոջ աղջիկներին ամուսնացնելիս գլխագին պահանջելու:

Ուտինների մեջ աղջկան նշանելիս անպատճառ հարցնում են մորեղբոր կարծիքը, նշանդրեքին՝ որթոտքս ուտինների մեջ մի խոն, այսինքն մրգերով և թխվածներով լի սկուտղ, դնում են հարանցուի մորեղբոր առջև իրեն հատուցում այն շնորհի, վոր յուր քրոջ աղջիկը աղել է իրենց: Նույն նշանդրեքին լուսավորչական ուտինները փեսացվի կողմից բերված մի գլուխ շաքարը դնում են հարանցուի մորեղբոր առջև, վոր կոտորե և բաժանե հրավիրյալներին, միևնույն ժամանակ նրան մի ուրիշ դրամ են ընծայում, վոր տեղական բարբառով խալիզուզ (մորեղբոր բաժին) և կոչվում:

3) Հարանցուի ոժիտը բանալիս մորեղբայրը նստում է ոժիտի վրա և չի թույլ տալիս բաց անելու, մինչև վոր մի դրամական նվեր (մինչև մի սուրլի) չի ստանում:

4) Յեթև աղջիկ են փախցնում մորեղբոր պարտականությունն և դնալ, կովել և յետ բերել կամ հաշտություն կապել և պսակել: Անհայր յերեխաների պահպանություն հոգսն էլ մորեղբոր վրա չէ ընկնում: Նա չէ պարտա-

վոր նաև վրեժխնդիր լինել յուր քրոջ զավակների սպանման դեպքում: Վոչ միայն ոտարներից, նաև սրանց ամուսիններից, այսպես՝ որինակ, Նիժում Կաման Դախկուրյանը սպանել և յուր կնոջը, վորի մորեղբայրը Սարգիս Կարապետյանը լուծել և վրեժը:

5) Մայրիշխանության մի ապացույց էլ պետք է համարել այն, վոր թե նշանագրությունը և թե պսակի խորհուրդը կատարում է նորահարսի քահանան, միայն թագավորացումը թագվորի քահանան, և բացի սրտնից՝ պսակից հետո նորահարսը գնում է յուր հորանց տուն և վոչ նորափեսի հետևյալ որը միայն փեսան մակարներին հետ գալիս և տանում ու այս ժամանակ նորահարսի ծնողները նրա հետ չեն գնում, այլ սպասում են, մինչև վոր նորահարսին տանելուց հետո, մի առանձին պատգամավորություն և ուղարկվում սրանց հրավիրելու:

6) Մայրիշխանություն շրջանում վորդինները կոչվում էին մոր կամ նրա սերնդի անունով, այսպես և Նիժում, և Վարդաշենում կան գերդաստաններ, վորոնք կոչվում են իրենց նախամոր անունով, ինչպես, որինակ. Յեթևերնք:

7) Մայրիշխանություն մնացորդ պիտի համարել և այն, վոր կինը յուր ամուսնու մասին խոսելիս վոչ թե անվանում է նրան, այլ յուր վորդիններից միևնի, սովորաբար ամենից վորքի, հայրը կոչում: Այսպես՝ որինակ, Մայրամիս հայրը, ամթ համարելով ոտարների առջև հայտնել, վոր նա իր ամուսինն է:

8) Մայրիշխանություն մի շատ հետաքրքրական մնացորդ է և կա, այն է՝ վոր նիժեցիները և վարդաշենցիք միմյանց խալիք, մորեղբայր, են կոչում, թերևս մայրիշխանության միջոցին, յերբ այլացեղ (exogamie) ամուսնություն է տիրապետել, նիժեցիները վարդաշենցիների և վերջինները սրանց փեսա յեն դառել:

ՀԱՅՐԻՇԻԱՆԱԿԱՆ ՍԵՐՆԴԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

Ուտինները մայրիշխանությունից անցել են հայրիշխանության, յերկու դեպքումն էլ պահպանելով իրենց սերնդական կազմակերպությունը: Այս սերնդական կազմակերպությունը այժմ փոխանցել է թաղական կազմակերպության, պահպանելով յուր հատկանիշ կողմերը: Նիժը այժմ բաղկացած է տասը թաղից, վորոնք վոչ այլ ինչ են, յեթև վոչ աստիճանաբար աճած սերունդներ, վորոնք արյունակցական կապով կապված լինելով՝ կազմում են մի տոհմ, այժմ մի համայնք: Վարդաշենն էլ բաղկացած է 3 թաղից կամ սերնդից: Հիշենք յուրաքանչյուր սերնդի ստանձնատու կողմերը:

1) Յուրաքանչյուր սերունդ ունի իր առանձին հողամասը, վոր վորոշ ստանձններով անջատված է մյուս սերունդների հողամասերից: Այս հողամասը պատկանելիս է յեղի միևնույն սերնդի բոլոր անդամներին, սակայն այժմ այդինները դարձել են անհատական սեփականություն, մինչդեռ մյուս հողերը, վոր «հանդ» են կոչվում, այժմ էլ ընդհանուր սեփականություն են կազմում և յերեք տարին մի անգամ հավասարապես բաժանվում են սերնդի տներին վրա:

2) Յուրաքանչյուր սերունդ հավատում է, թե սերել է մի նախահորից, վորի անունն էլ կրում է, այսպես, որինակ, Նիժի Դալլակու թաղի բոլոր գերդաստանները կոչվում են Դալլաքներ, և առաջացել են մի վոմն Չալ Դալլաքից (սափրիչից), Վաղիրու թաղի գերդաստանները կոչվում են Վաղիրներ և իբր նախահայր ընդունում են Վաղիրին, Փալչու թաղի գերդաստանները կոչվում են Փալչներ, և հպարտանում են, վոր իրենց նախահայրը նշանավոր փալչի, կախարդ, և յեղել: Պիժելու թաղի ճոտանյանները կազմում են 11 տուն և կարծում են, թե սերել են միևնույն ճոտան նախահորից:

3. Ն ա խ ա հ ո Ր ա շ տ ա մ ու Ն ք.—Յուրաքանչյուր սերնդի մեջ կա մի ուխտատեղի, վոր սովորաբար մի սուրբ ծառ է, ստորոտում մի քար զրած, վոր գերեզմանաքար է համարվում: Սերունդը այդ գերեզմանն յուր նախահորն և վերադրում և դառնի ու սուրբ խաչին որհնել տալիս: Զատկի և ծննդյան նախըթաց յերեկոներին սերնդի գրեթե բոլոր անդամները հավաքվում են այս ուխտատեղին և այստեղ «պատերը բաց անում», այսինքն մոմ են վառում այդ նախահոր գերեզմանի վրա, համբուրում և ապա մի-մի ձուռ ուտում և գնում իրենց տները, թաթախվելու և կամ հենց այդտեղ են բերում յուրաքանչյուրն յուր տանից ուտելիքներ, և միասին ուտում: Նույն սերնդի անդամներից մինը ամուսնանալիս, պաակից հետո, նախքան թաղվորի տունը գնալը, հարս ու թաղվոր գալիս են այդ ուխտատեղին, համբուրում նախահոր գերեզմանը, մոմ վառում: Այսպիսի սերնդական ուխտատեղի, նախահոր գերեզման, բոլոր սերունդներին մեջ էս կա, վորին զբլխալորապես և պարտադիր կերպով ուխտ են գնում նույն սերնդի անդամները, սակայն թե Նիժում և թե Վարդաշենում կա մի-մի գերեզման, ուխտատեղի, վորին ուխտ են գնում բոլոր սերունդները. սրանք տոհմի նախահոր գերեզմանն են, այսինքն այն առաջին սերնդի նախահոր, վորից առաջացել են մյուս սերունդները: Այսպես՝ Նիժում, Դարաբաղ թաղում, կա Թովուդ-զրան (հավեր կոտորող) ուխտատեղի. սա մի քանի սուրբ ծառերի սովերի տակ հանգչող մի գերեզման է, վորին բոլոր նիժեցիները պարտավոր են բարեկենդանի կերակրի որը ուխտ գնալ և տունը մի հավ մատաղ անել: Վարդաշենում, գյուղի արևմտյան կողմում, գետակի աջ ափում, ամհնահին գերեզմանատան մեջ կա մի գերեզման, վոր փայտե պատնեշով պատած է: Սա Վարդան զորավոր է կոչվում, միայն ժողովրդի բերանում զրավոր է հնչվում, գետակին և սուրբ խաչին գրեթե բոլոր վարդաշենցիներն ուխտ են գալիս այստեղ և գերեզմանի վրա մոմ վառում: Ո՞վ գիտե, թե երև լինելով Վարդաշենի առաջին սերնդի նախահայր՝ յուր անունն էլ տվել և գյուղին:

4. Ը ն դ հ ա ն ու Ր գ ե Ր Ե Ղ մ ա ն ա տ ու Ն.—Նկատելի չի, վոր այժմ ուխտատեղի համարված նախահոր գերեզմանի շուրջը կան գերեզմաններ, հետևապես և ուտիական սերունդներն էլ ունեցել են իրենց առանձին սերունդական գերեզմանատունը, իրենց նախահոր գերեզմանի մոտ: Այժմ Նիժում կա յերկու գերեզմանատուն, մինը Դարաբաղ թաղում, մյուսը Մալրիսում: Դարաբաղին բաժանված է 7-ը մասի և յուրաքանչյուրը հատկացված է մի սերնդի կամ թաղի: 1-ին Դարամահլի, 2-ը Նրճարեկու, 3-ը Պիժիլ-

լու, 4-րդ Ջերմահլա, 5-րդ, Դալլակու, 6-րդ Դաշուրուղ և 7-րդ Արդալու: Մալրիլի գերեզմանատունը բաժանված է յերկու մասի՝ Քալա գյարամուղ (մեջ գերեզմանատուն) և Ղարի տապակ (չոր տեփուր, փայտե սկուտղ): Քալա գյարամուղը ևս բաժանված է յերեք մասի և հատկացրված Մալրեր, Վաղրու և Փալչու թաղերին և այս այն պատճառով, վոր սկզբում յեղել է միայն Մալրի թաղը կամ սերունդը, վորի գերեզմանն ամենից հին է, ապա սրանից ծագել են Վաղրու և Փալչու թաղերը կամ սերունդները, վորոնք թեպետ նույն նախնական գերեզմանատանն են տեղ վերցրել, սակայն և այնպես առանձնացրել են: Ղարի տապակ գերեզմանատանը թաղում են միայն Ֆարմուլ թաղեցիները, վորոնք սակայն դեռ ևս չեն դադարել իրենց նախնական, Քալա գյարամուղ գերեզմանատանը թաղելուց:

Վարդաշենում մի քանի հին գերեզմանատներից զատ կա մի ընդհանուր գերեզմանատուն, վոր բաժանված է սերնդների միջև և այս սերնդական գերեզմանատուն ունենալու զաղափարն այնքան զորեղ է, վոր կրոնի տարրերու թյունը դեռ ևս չի կարողացել անջատել միևնույն սերնդի, որինակ Սելիկյանց, ահագին տան թե լուսավորչական և թե պրավոսլավ անդամները հանգչում են կողք-կողքի:

5. Փ ո խ ա դ ա Ր Ճ ա շ տ ա պ ա ն ու թ յ ու Ն և ա Ր յ ա ն վ Ր Ե Ժ խ ն դ Ր ու թ յ ու Ն.—Սերնդի անդամները գիտակցելով արյունակցական կապը և տնտեսական խնդիրների միությունը պարտավոր են զգում իրենց փոխադարձաբար պաշտպանել միմյանց և վրեժխնդիր լինել իրենցից մինի արյան և հետևապես ստանալ կամ վճարել արյան փրկանք: Այսպես, որինակ, յերբ վորեւ պատճառով յերկու տարրեր սերունդների անդամների մեջ կոխվե ծագում՝ յուրաքանչյուր սերնդի մյուս անդամներն էլ առանց քննելու պատճառը կամ մեղավոր, արդար լինելը, իրենք էլ մասնակցում են կոխվել, վորով անհատական կոխվել մեծանալով դառնում է սերունդների կոխվել, և յերբ վորեւ կողմից մարդ է սպանվում՝ մյուս կողմը ամեն միջոց գործ է գնում արյան վրեժը լուծելու: Բերենք փաստեր, մի անգամ գերեզմանատանը Վաղրու և Դարաբաղի թաղերի յերկու անդամի մեջ կոխվե ծագում, յուրաքանչյուր թաղի անդամը յուր անդամակցին ոգնության հասնելով, կոխվել մեծանում և թաղական կամ սերնդական կերպարանք և ստանում: Վաղիրուցիները լավ ձեռնում են դարաբաղցիներին: Մի քանի որից հետո դարաբաղցիները հավաքվում են և գնում փչացնում վաղիրուցիների արտերը: Սրանք լսում են այդ մասին, ամբողջ թաղը հավաքվում հարձակվում և սրանց վրա և սաստիկ ձեռնում: Վերջիններս զենքի են դիմում, և յերկու մարդ սպանում: Միքանի որից կրկին կոխվել վերանորոգվում է և այս անգամ վաղիրուցիները սպանում են դարաբաղցիներից յերկու մարդ, վորով արյան վրեժը լուծված համարելով դադարում են:

Սերունդների կամ թաղերի միջև արյան վրեժխնդրությունն այնքան շարունակվում է, մինչև վոր կողմնակի սերունդներ միջնորդելով, խնամություն են հաստատում այս սերունդների մեջ:

Այսպես որինակ Ներսես Խաչատրյան Դալլաքյանին սպանել է Դավիթ Խոտանյանը և վորպեսզի խուսափեն վրեժխնդրությունից, համոզել են, վոր յուր աղջիկը տա սպանվածի վորդի համբարձումին:

6. Ս ե ռ ն զ ա կ ա ն ժ ո ղ ո վ ն ե ռ.—Չնայելով վոր մի դար և ինչ այս յերկու գյուղը յենթակա են ուսաց տիրապետության, հետևապես և ուսական վարչական կազմակերպության, աշխուսմենայնիվ պահպանել են իրենց սերնդական վարչական կազմակերպությունը: Նիժը կազմված լինելով 11 թաղերից, վոր նույն և սերունդներից, ունի 11 տանուտերի ողնական և մի տանուտեր: Վարդաշենը, վոր բաղկացած և յերեք թաղից կամ սերնդից, ունի յերեք տանուտերի ողնական և մի տանուտեր: Հետևապես յուրաքանչյուր թաղ կամ սերունդ ունի յուր գլխավորը և յուր ներքին գործերը նա վարում և թաղական կամ սերնդական ժողովներով բոլորովին ազատ մյուս թաղերի միջամտությունից, այսպես, որինակ, դորոտչի, հովիվ, ջրպետ վարձելիս թաղի կամ սերնդի առաջավոր տղամարդիկ հավաքվում են ժողովի և իրենց տանուտերի ողնականի գլխավորությունը ընտրություն կատարում: Նաև ներքին փոքրիկ խռովությունները, յեղբայրների բաժանումը վերջացում են իրենց մեջ, նույն տանուտերի ողնականի միջոցով և միայն ավելի մեծ խնդիրների ժամանակ նույն ողնականի միջոցով զիմում են տանուտերին:

7. Տ ո հ մ ա յ ի ն ը ն զ հ ա ն ու ռ ժ ո ղ ո վ ն ե ռ.—Ամբողջ տոհմին կամ գյուղին վերաբերյալ խնդիրներին համար գումարվում և շինական ժողով, տանուտերի գլխավորությունը, հրավիրվում են բոլոր տներից միայն մի-մի մարդ, և սրանք մի վորեն մասնաժողով կազմելիս, որինակ, զպրոցի հոգաբարձություն, մանր վարկի ընկերություն վարչություն և այլն, աշխատում են բոլոր թաղերից ներկայացուցիչներ մտցնել: Հետաքրքրական և, վոր ուտինները սեփական միայն մի բառ ունեն վարչական անձնավորությունն վորոշելու, այն և Բեշ-քալո կամ Բեշ-քուլ՝ մեր մեծը կամ մեր գլուխը, վոր տալիս են տանուտերի ողնականին, նախկին սերնդի մեծին, իսկ մյուս բառերը, ինչպես, յուզբաշի, (տանուտեր) պրիստավ, փաթշահ (թագավոր), սուդիա, թուրքերեն և ուսերեն են:

8. Փ ո խ ա զ ա ր ձ ո զ ն ու թ յ ու ն.—Վորպես սերնդական կազմակերպության հետևանք փոխադարձ ոգնությունն ուտինների մեջ արտահայտվում և նախ նյութական ոգնություն և յերկրորդ աշխատակցություն մեջ: Ուտինները միմյանց նյութական ոգնություն են հասնում կյանքի գրեթե բոլոր հանգամանքներում: Այսպես՝ ծննդական ծննդավաթ, զանազան ուտելիքներն են տանում: Մինի նշանադրության ժամանակ խոնքեր՝ այսինքն զանազան ուտելիքներ են տանում և 20 կոպեկից մինչև մի ուտելի նվիրում հարսնացուին: Բարգյահի ժամանակ 20 կոպեկից մինչև մի ուտելի նվիրում հարսնացուին:

Սամավարի զոնախլի* ժամանակ փեսացուի համար խոնքեր են տանում. խոնքում լինում են՝ խաշած հավ, դաթա, կարմիր ձու, խնձոր, տանձ, խաշած շագանակ, կաղին, մի թաշկինակ կամ յերես սրփիչ: Հարսնացուի շորերը կարելիս ձեռք կնոջը զրամական նվերներ են տալիս: Թագավորին սափրելիս սափրիչին նվերներ են տալիս: Յերք պսակվող յերիտաարդին թագավորի շորերը հագցնում բշակ են կանգնեցնում (ինչպես Վարդաշենում) և կամ պոսակից հետո, ինչպես Նիժում, կանչի ժամանակ, աղբեշումի թաշ-

* Տես հարսանիքի նկարագրություն մեջ:

կինական և 20 կ. մինչև 5-ական ուտելի նվեր են տալիս թագավորին, պրսակի միջոցին քահանային խաչամարյուր են տալիս: Պոսակից տուն վերադառնալիս հարս ու փեսին զանազան ուտելիքներ և խմիչք, մրգեր և այլ ընծաներ, որինակ՝ մետաքսե թաշկինակ, շալ, յերեսի ծածկոց են նվիրում: Պոսակաճաշին խոնքեր են բերում, մի տապակած հավ, 2 դաթա, կարմիր ձու, խնձոր, տանձ, յեփած շագանակ, կաղին, և այլն, վրան մի մետաքսե թաշկինակ ձգած: Պոսակից մի ամիս հետո, յերբ տեղի յն ունենում նորահարսին տեսնելու ծիսակատարությունը, բոլոր հրավիրյալները բացի մրգեղենից, զրամական նվերներ են տալիս նորահարսին: Հաց թխելիս, առաջին միրգը քաղելիս, կովի դալից, կարապից, մաճնից, սովորաբար միմյանց բաժին են ուղարկում: Պանդխտություն գնալիս բարեկամները թխվածներ են բերում, և յերբ գնացողը վերադառնում և, փոխադարձաբար զանազան նվերներ են բերում: Մինը հիվանդանալիս զանազան մրգեղեն, կերակրներ են տանում, հոգուհացի, այլը, յոթը և քառասունը կատարելիս գինի, ողի, մրգեղեն են տանում, հրդեհ պատահելիս վոշ միայն ամենքը ոգնություն են հասնում, այլ և կացինը դնել տալիս տան տնաախրոջ ուտին, իրենք ընկնում առաջ և այլուց այլի ման գալով նոր տնաշինություն համար փայտ, գերան հավաքում:

Աշխատակցելով միմյանց փոխադարձ ոգնություն մատուցանելը հետևյալ դեպքերում և կատարվում: Մինը տուն շինելիս, կտրի գերանները ձեղելու, կտուրը ծածկելու, տան մեջ մնացած հողը դուրս հանելու համար կանչում և անխտիր բարեկամներին, հարևաններին, և ծանոթներին, վորոնք սիրով կատարում են այդ աշխատանքները, բավականանալով միայն մի ճաշի հյուրասիրությունով:

Յերք հարկ և լինում մի ծանր գերեզմանաքար կամ ջրաղացի քար բերել, ջրաղացի սուռն մաքրել, նույնպես հրավիրում են ծանոթներին, վորոնց վարձատրություն չեն տալիս, այլ միայն սովորական ճաշ—մի տեսակ կերակուր: Յերք դժվարանում են արաք հնձել, ցորենը կամ խոտը տուն բերել, պարտեզը մշակել, նույնպես հրավիրում են ծանոթներին ոգնելու առանց վարձատրության, միմիայն մի ճաշով հյուրասիրելու պայմանով: Վոշ միայն տղամարդիկ, այլ և կանայք փոխադարձաբար ոգնում են միմյանց, այսպես որինակ, բուրդը գգելիս, կաղինը մաքրելիս, պարտեզը քախհանելիս, հարսանիքի հացը թխելիս, հոգու հաց տալիս, հարսնացուի շորերը կարելիս, կանայք սիրով հավաքվում են, ոգնում են և բավականանում միմիայն ճաշի հյուրասիրությամբ:

Փոխադարձ ոգնություն համար աշխատակցելը ուտիքեն մաժի և կոշվում, յեվ յերեք հյուրասիրությունը ավելի չի արժենում քան հասանելի վարձատրությունը:

Ուտինների մեջ կա նաև համայնական աշխատանք, այսպես, որինակ, յեկեղեցի, դպրոց, ճանապարհ, գյուղական դատարան շինելիս բոլոր գյուղացիներն անխտիր աշխատում են՝ քար, փայտ, սվազ, բերում, շարավոր յերկու հոգի գիշերապահի պաշտոն են կատարում ձրիաբար:

Մի սովորություն էլ ունեն ուտինները, այն և վոր յեկեղեցուն նվիրում են մեծ-մեծ կաթսաներ, ամսներ, գզալներ, սիւնոցներ, այն պայմանով, վոր

հարսանիք ունեցողները, թաղման հոգու հաց տվողները, մատաղ կտրողները, ձրիաբար ոգավեն:

Ն ա հ ա պ ե տ ա կ ա ն գ ե ղ ա ս տ ա ն.— Մարդկային սեռի զարգացման այն աստիճանը, յերբ առանձին անձի անհատականությունը զարթնում է անկախ կյանք և անձնական գործունեություն ապելի լայն աստղերից ունենալու բուռն ցանկությունից, հետզհետե լուծում է սերնդական կազմակերպությունը և առաջ բերում նահապետական գերդաստանական կազմակերպություն: Նիժում է Վարդաշենի Ղըշլաղ թաղում դեռ ևս յարատևում են 20-40 անդամներից բաղկացած գերդաստաններ: Սրանց մեջ տիրում է նահապետական պարզություն տակ, ստրկական կյանք. սղամարդկանց բռնակալություն և կանանց ստրկություն: Գերդաստանը կարծես բաժանված է յերկու աշխարհի՝ սղամարդկանց և կանանց: Տղամարդիկ առանձին են աշխատում, նստում, կանգնում, հաց ուտում, դվարճանում, կանայք՝ առանձին: Զխոսկանությունը այս յերկու սեռերի մեջ պարտադիր որևէ է, կինը վոչ միայն իրավունք չունի մի վորեն սղամարդու հետ խոսելու, այլ և պարտավոր է նրա յերևալիս փախչել, թաք կենալ, իսկ փողոցում պատահելիս՝ յերեսը շուռ տալ նրանից, և նրան մեջք արած կանգնել, մինչև վոր անց կենա: Տասնյակ տարիների հարսնությունից հետո միայն կինը իրավունք է ստանում յուր տեղերի զիմուսներին ցածր ձայնով պատասխան տալ: Կինը զրկված է յուր սեռի անդամների հետ ել խոսելու իրավունքից, այսպես՝ սկեսրոջ հետ 10 տարի, տեքերկինների հետ՝ 3—4 տարի, հասակով տալերի հետ 5—6 տարի և նույնիսկ հասակակից տալերի հետ՝ կիսից մեկ տարի: Սեփականությունը պատկանում է սղամարդին, իսկ կինը զրկված է այդ իրավունքից, աղջիկը ամուսնանալով վոչինչ չի տանում գերդաստանի կարողությունից. անդամակ կինը վոչինչ չի ժառանգում յուր ամուսնուց, համամայր վորդինները յուրաքանչյուրը յուր հոր կարողությունն է ժառանգում, իսկ համահայր վորդիները հավասարապես բաժանում են թե մայրերից և թե հորերից մնացած ժառանգությունը: Տղամարդը վայելելով գերակշռող դեր, ամեն մի դեպքում բռնանում է կնոջ վրա. հայհոյել, թակել կնոջը, քույրերին, հարսներին, սովորական յերևույթ է, այսպես՝ յերբեմն նույնիսկ անողորմ, վոր մահ է պատճառում. այսպես Վարդաշենում մի սղամարդ լսելով յուր մորից, վոր կինը մի հավ է ծածուկ մորթել, յեփել ու կերել, հանում է դաշույնը և այնպիսի մի ծանր հարված տալիս կնոջ ուսին, վոր վերջինս սաստիկ վիրավորվելով 7 որ տանջվելուց հետո մեռել է:

Սովորության իրավունքը խիստ բաժանել է աշխատանքը թե սեռերի և թե գերդաստանի անդամների մեջ, վորով և վերջ է տվել ավելի խիստ ճշնշունների և հալածանքների: Այսպես՝ դաշտային բոլոր աշխատանքները վերապահված են սղամարդուն, իսկ տնայինը՝ կնոջը, սակայն տնային կոչված աշխատանքների մեջ կան շատ ծանր գործեր, վոր միանգամայն վեր են կնոջ ուժերից, ինչպես, որինսկ՝ շերամի համար ալգիներից թթնոտ ճյուղեր բերել շալակած: Գերդաստանի անդամների մեջ ել աշխատանքն այսպես է բաժանված. սկեսուրը կամ մեծ հարսը հաց է թխում և կերակուր բաժանում, յերկրորդ, յերրորդ և չորրորդ հարսները մինը խմոր է հունցում, մինը տափարը կլնում, մինը կերակուր յեփում. բոլոր հարսները միասին գնում են

ջուր բերում: Ամենափոքր հարսի պարտականությունն է տնեւն ավել, բոլորի անկողինները ձգել և հավաքել, սկեսրոջ և սկեսարի շորերը գիշերն հանել, առավոտները հագցնել, ջուր տալ լվացվելու, նրա պարտականությունն է նաև նստել սկեսարի մոտ և նրա վոտներն այնքան մածել, մինչև վոր քնի: Այս սահմանված սովորության կարգերին իրեւ անմիջական վերահսկելի կանգնած են սղամարդանց վերարեւմամբ տան ամենամեծ անդամը, հայրը կամ պապը, իսկ կանանց վերարեւմամբ՝ մայրը կամ տատը: Գերդաստանի ամբողջ սեփականությունը հերկայացուցիչը հանդիսանում է այդ նահապետը, նրա մոտ է հավաքվում գերդաստանի բոլոր անդամների վադտակը, և նա է պատասխանատու դրանց բոլորի արած պարտքերի և գործառնություն: Գերդաստանի բոլոր անդամները պարտավոր են կուրորեն հնազանդվել նրան, սակայն նա ել պարտավոր է անաչառ վերարեւմել բոլորին և կառավարել սիրով ու գթությամբ: Նրա մահից հետո իշխանությունը անցնում է նրա հաջորդ յեղբորը և կամ, յեթե յեղբայր չունի, նրա ավագ վորդուն: Ավագության կարգը խստություն պահպանվում է և այս վոչ միայն իշխանությունը ժառանգելիս, այլ և առօրյա կյանքում, այսպես որինակ, նստելիս փոքր յեղբայրը մեծից բարձր չի նստի, մեծը փոքրին չի ծառայի, փոքրը մեծի ներկայությամբ շատ չի խոսի, և այլն: Սակայն պատահում են դեպքեր, վոր ավագը տան կառավարություն անընդունակ և լինում և ավագությունը զիջում է իրենից կրտսեր յեղբորը:

Տան ներքին կառավարությունը կենտրոնացած է մոր կամ տատի ձեռքում, նրան են հնազանդվում բոլոր հարսներն ու աղջիկները, նա է պահում տան բարիքների բանալին, սակայն առանց տան մեծի թույլտվության իրավունք չունի վոչ մի բան, նույնիսկ մի հավ, մի ֆունտ յուղ ծախելու, և կամ մեկին նվիրելու:

Նրա անձնափոխանորդը և հաջորդը համարվում է գերդաստանի մեջ տարեքով բարձր յեղող սղամարդի, տան մեծի յեղբոր կամ ավագ վորդու կինը, չնայելով վոր ու հասակով ավելի փոքր լինի յուր տեղերկիններից:

Ուտի գերդաստանի որը սովորաբար այսպես է անցնում. Առավոտը շատ վաղ, դեռ արշալույսը չձագած, վեր են կենում հարսները, լվացվում, փոքրը գնում է սկեսրոջ շորերը հագցնում, իսկ մյուսները գնում են ջուր բերելու: Կանանցից հետո վեր են կենում սղամարդիկ, փոքր հարսը գնում է սկեսարին հագցնելու և ջուր է տալիս լվացվելու ինչպես նրան, այնպես և մեծ տեղերին: Տղամարդիկ մի-մի բաժակ ողի են խմում, մի քիչ հաց ու պանիր և կամ միայն հաց են ուտում և գնում իրենց գործին: Յեթե փոքր ինչ հարուստ են, թեյ ել են խմում. սղամարդկանցից հետո կանայք են հաց ուտում և թեյ խմում, պետք է ասել, վոր կանայք ել սիրում են մի-մի ողի խմել: Անմիջապես մեծ հարսը խմոր է հունցում, մինն ել կովերը կթում: Սկեսուրն սկսում է հաց թխել, փորից հետո մեծ հարսը կերակուր է յեփում, կես որին սղամարդիկ դալիս են տուն, սկեսուրը յեղողին կերակուր է տալիս, ուտում են և գնում գործին: Յերբ բոլոր սղամարդիկ հաց կերած են լինում՝ սկեսուրը հարսերի և աղջիկների հետ նստում ճաշում են, վեր կենում իրենց գործերով զբաղվում, ամառը շերամապահությունը և պարտիկ մշակությունը, իսկ ձմեռը՝ իլիկ, ճախարակ են մանում, կար անում,

8001
41953

դուրյա գործել չեն իմանում, լեզվինքն են բերում ծախում, այժմ քիչ-քիչ սովորում են, յերեկոյան ժամասացութունից հետո տղամարդիկ գալիս են տուն, միասին ընթրում են, վորից հետո կանայք են մի կողմ նստում և հաց ուտում: Այս տղամարդիկ առանձին նստում են ձմեռներն սջաղի շուրջը միմյանց հետ զրույց անում և միաժամանակ զգալ շերեփ, սամի շինում, իսկ կանայք սրանցից քիչ փոքր հեռու նստած վորեւ բանով զբաղվում են և լսում տղամարդկանց խոսակցութունը, առանց սակայն իրավունք առնելու խոսակցության մասնակցելու: Ժամը 8—9-ը փոքր հարսը անկողինները ձգում է՝ պահպանելով ավագության կարգը. քնում են ավագության կարգով: Մեկ էլ բոլոր տղամարդիկ պետք է քնեն՝ նոր՝ կանայք: Գերդաստանն ընտանիքի է վերածվում սոցիալական հայտնի պայմաններով: Բաժանվելիս ընտրում են մի քանի միջնորդ, վորոնք սովորաբար մեծ յեղբոր համար մի առանձին բաժին են վորոշում, որինակ մի գոմեշ, մի ձի, մի կով, կամ մի գորգ, նաև չամուռնացած յեղբայրների համար մի գումար են հատկացնում, հարսանիքի ծախսերը հոգալու, մի բան էլ մոր համար են վորոշում և ապա ֆնացածը, յեղբայրների թվի համեմատ, հավասար բաժանում են և վիճակ ձգում, առանց ի նկատի ունենալու, վոր յեղբայրներից վորեւ մեկի չափահաս վորդինքը տարինքը շարունակ իրենց վաստակը տուն են բերել: Վիճակը այսպես են ձգում. ամեն մի յեղբորից մի նշան են վերցնում և բոլորը միասին տալիս մի յերեսայի, վոր ամեն միքը մի բաժնի վրա ձգի. ում նշանը վոր բաժնի վրա ձգե՞լ այն վերցնում է: Մայրը իրեն հատկացրած բաժինը վերցնելով ապրում է վորդինքներից միքի, հաճախ փոքրի, հետ: Յեթի այս բաժինը մեծ է լինում, նրա մահից հետո յեղբայրները մաս են պահանջում: Յերբեմն հոր կենդանության ժամանակ էլ են բաժանվում. այս դեպքում հորն էլ առանձին բաժին են տալիս, վոր նրա մահից հետո կրկին բաժանում են. յերբեմն հայրը ինքնակամ վերցնում է ինչքան կամենում է, ֆնացածը թողնում բաժանելու: Այս դեպքում նրա մահից հետո նրա թողածը հավասար բաժանում են վորդինքների մեջ: Արու գավակ չունեցողների կայքը մահից հետո տանուտերը բաժանում է ըստ իր հայեցողության, այսպես՝ աղջիկներին տալիս է մի վորեւ բան, հոգուտ յեկեղեցու մի գումար հատկացնում և ապա ֆնացածը բաժանում է արական կողմի ազգականներին:

Ուտական ընտանիքների համար արու գավակ չունենալը ոջաղի մարումն է նշանակում և որս հետ միասին ընտանեկան գերեզմաններն անխնամ, առանց որհնել թողնել, ուտաի և սրանք յեթի աղջիկ են ունենում՝ անփեսա չեն բերում, այսինքն հրավիրում են ամուսնանալ իրենց աղջկա հետ այն յերեստարդին, վոր համաձայնում է թողնել իր հայրական տունը և տեղափոխվել ընդմիջտ աներանց տուն: Իսկ յեթի աղջիկ էլ չեն ունենում, այն ժամանակ մի վորեւ ազգական տղայի վորդեղբուն են և կտակով իրենց կարողության մի վորոշ մասը նրան թողնում: Գյուղական կտակները սովորաբար բանավոր են լինում կամ գրում է քահանան, հաստատում տանուտերը:

ՈՒՏԻՆԵՐԻ ԱԶԳԱՅԱԿԱՆ ԲԱՌԵՐԸ

Տալին, ինչպես և տալի մորը, տալում են քալ նանա, այսինքն մեծ մայր:

Մորը . . .	նանա
Հորը . . .	բաբա, ապեր
Հորեղբորը . . .	ամի
Հորեղբոր կնոջը . . .	ամիկուն չրուխ
Մորեղբորը . . .	խալիք
Մորեղբոր կնոջը . . .	խալիկուն չրուխ
Հորաքրոջը . . .	դադա
Մորաքրոջը . . .	խալա
Բրոջը . . .	խունչի
Յեղբորը . . .	վիչի
Կնքահորը . . .	խաչբաբա
Կնքամորը . . .	խաչնաքու
Խնամոնց . . .	դուդա
Անեղջը . . .	դայիմ բաբա (կնոջ հայր)
Ջոքանջին . . .	դայնաքո
Սկեսրայրին . . .	սեյդե
Սկեսրոջը . . .	սեյնե
Տեղբորը . . .	սեչե
Տալին . . .	մուլի
Տեղբակնոջը . . .	սեչե չրուխ
Բենուն . . .	բեյջան
Կնոջ յեղբորը . . .	դային

Կնոջ քրոջ ամուսնուն (բաջանաղին) բաջանաղ:

Կինը ամուսնու մասին խոսելիս, սկսեց լուրջ կոչում է վիք դարեն (վորդիդ), տալի առաջ՝ վի վիչեն (յեղբայրդ), տեգեկնոջ՝ վի սեչեն (տեղբորդ) յուր ծնողների առաջ՝ բեգիչեն (ամուսինս), ուրիշների առաջ՝ իր յերեսայի անունով՝ մեշ Վարդանի բարան (մեր Վարդանի հայրը), իրեն հետ խոսելիս՝ այ քեթիս (այ տանուտեր): Իսկ ամուսինը իր կնոջը կոչում է իր ծնողների առաջ՝ եվ բին կամ եվ բինե (ձեր հարսը), կամ նրա հոր անունով Սիլիկաղարի խինար (Սիլիկյանների աղջիկը), իսկ իրեն, կնոջ հետ խոսելիս՝ եյ-եյ, կամ Սիլիկաղարի խինար:



6798

0002763

2013

ՀՀ Ազգային գրադարան



NL0002763

